

- 67 Ուր գնացեալ զիւր հօտն հովուէր
 Զանիւ սիրով որպէս պարտն էր,
 Իսկ հալածանք եղբարցն անսէր
 Փութով անտի ըզնա վանէր:
- 68 Զոր ես յետոյ ճանաչեցի,
 Նրստեալ այլ ուր ըստ ճրգնողի
 Կեանքս վարէր առանձնակի,
 Օժանդակեալ այլու՞ հօտի:
- 69 Մինչեւ ցայն վայր Սարգիս ճարտար
 Բաց ի վերնոյն եւ զայլ գումար
 Աշակերտաց բազմահանճար
 Հըրահանգեալ էր անդագար:
- 70 Որոց մինն էր գաղատացի
 Իգնատիոս քաջ բարունի,
 Նախ նուիրակ էջմիածնի
 Հանգչիւր յետոյ մահուամբ բարի:
- 71 Եւ այլ ոմն էր մեծ կեսարեան
 Յօհան բարուն Արիմանեան,
 Որ եւ ապայ պատուով արժան
 Երէց կարգիւր հայոց Թրեստեան:
- 72 Մարգեալ էր իսկ նա յԱնկուրեայ
 Զոմն էօրտէկճեան Պետրոս տղայ,
 Զոր եւ երէց եւ աբեղայ
 Ի վէնէտիկ օրհնէր ապայ:
- 73 Սոյն էր որ զՎնի բնկերացաւ
 Վարդապետին սիրով մեծաւ
 յՈղջոյն նորին աքսորս կամաւ
 Առ ծառայել նրմա վշտաւ: